

ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒՆ

ՎԵՐԱԳՐՈՒԱԾ ՄԻ ԵՐԿԻ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հայ միջնադարում, սկսած ԺԲ. դարից, Նարեկացու անունն ա՛յն-
քան նախապատիւ ու տիրական է եղել, որ, բնականաբար, մատենա-
գրութեան ամէն մի ճիւղ մեկնողական, ներբողական, կանոնական,
դաւանաբանական, բարոյախրատական, ճառագրական, բանաստեղ-
ծական, եւայլն, կրել է նրա արգասաւոր ազդեցութիւնը: Նրա գոր-
ծը դիտուել է որպէս կատարելութեան տիպար ու չափանիշ, եւ նրան
նմանուելը, նրա գրական ուղեծիրով ընթանալը, անգամ պարզ նմա-
նակումը՝ կարծես ինքնակամ յանձնառութեամբ յետնորդների համար
դարձել է ստեղծագործական ոճ ու եղանակ: Նարեկացու մեծութեան
նմանօրինակ ընկալումը նաեւ յանգեցրել է այն բանին, որ ա՛յլ Հե-
ղինականների ինչ-ինչ գործեր, յաճախ աննշան, յաճախ է՛լ՝ գրական ու
գիտական որոշակի արժէք ներկայացնող, վերագրուեն նրան: Վերա-
գրման այդ ընթացքը այլեւայլ պատճառներով եւ ուղիներով, շատ
դէպքերում՝ համանուն աւելի երկրորդական մատենագիրների հետ
Նարեկացի Գրիգորի անուան շփոթութեան հետեւանքով, ահա, ակօս է
բացել միջնադարեան գրչութեան աշխարհում, վերածուել մի տեսակ
աւանդույթի եւ նոր ժամանակներում եւս ինքնաբերաբար արտացոլուել
տպագիր գրականութեան մէջ: Բանասիրութեան խնդիրն է մեծ բա-
նաստեղծին յանիրաւի վերագրուած այդ գործերը «վերադարձնել»
իրենց բուն հեղինակներին՝ ճիշտ պարզգծելով Նարեկացու ստեղծա-
գործութեան սահմանները:

Տարիների ընթացքում մենք ուշիուշով հետեւել եւ հաւաքել ենք
նման երկերը (բացառապէս արձակ), որոնց քանակն է մէկ տասնեա-
կից: Նախկինում թէ՛ գրականութեան պատմութիւններում (Գ. Զար-
պհանալեան, Ե. Դուրեան, Ն. Պողարեան, Մ. Մկրեան եւ ուրիշներ),
թէ՛ առանձին յօդուածներում եւ թէ բնագրերի հրատարակութիւնների
ծանուցումներում ու ծանօթագրութիւններում առիթից, մեծ մասամբ
հապճեպ ու անցողակի, խօսք է գնացել դրանցից մի քանիսի հեղինա-
կային պատկանելութեան շուրջ, չնչին բացառութեամբ՝ դրանք հա-

մարուել են երկբայելի գործեր, կասկածել են, բայց եւ երկու-երեքը Նարեկացու անունով էլ տպագրել: Իրապէս Նարեկացուն չպատկանող այդ ստեղծագործութիւնները հանգամանալից քննութեան չեն արժանացել, չի՛ յստակուել ու ճշգրտուել նրանց հեղինակների հարցը: Ներկայ յօդուածում մեր նպատակն է պարզել դրանցից մէկի բուն հեղինակին՝ Նարեկացու անունն ազատելով չփոթ վերագրումից:

Խօսքը վերաբերում է խրատական-դաւանաբանական մի երկի՝ «Համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան» խորագրով, որ արժանացել է բաւական թուով հրատարակութիւնների, իսկ վերջերս նաեւ թարգմանուել արեւելահայերէն ու տպագրուել առանձին գրքով¹: Նարեկացուն վերագրուած երկերի շարքում ծաւալուն այս գործը ամենանշանաւորն է, Հայոց Եկեղեցու դաւանանքը իմաստասիրական խորքով ներկայացնող մի ստեղծագործութիւն, որին հենց այդ տեսանկիւնից կարեւորութիւն տալով՝ դեռեւս իր «Արամեան լեզուին զանձ» աշխատութեան մէջ տեղ է յատկացրել հայագէտ՝ Յոհան Յոհակիմ Շրոյդէր²: Նա իր գրքի, «Դաւանութիւն հաւատոյ եկեղեցեաց Հայաստանեայց» բաժնում, բացի Ներսէս Շնորհալու եւ Ներսէս Լամբրոնացու՝ նոյն բնոյթի երկերից, դրաբար բնագրով եւ լատիներէն թարգմանութեամբ բաղմաթիւ քաղուածքներ է կատարել «Համառօտիւք բան խրատու»ից (թուով 11 հատուած) եւ իր ուղեկից շարադրանքում այն շարունակ դիտել է իբր Գրիգոր Նարեկացու ստեղծագործութիւն³: Ի՞նչ հիմք է ունեցել բաղմահմուտ գերմանացին՝ զայն վերագրելու Նարեկացուն. հետեւել է որեւէ ձեռագրի՞ թէ իրեն բանաւոր փոխանցուած ինչ որ կարծիքի՝ դժուար է ասել:

Խրատի առաջին ամբողջական տպագրութիւնը կատարուել է Պոլսոյ Պատրիարք՝ Յակոբ Նալեանի միջամտութեամբ⁴: Նարեկացու երկերն ամփոփող հատորում նրան եւս տեղ տալով՝ Նալեան հարկ է համարել հանդէս գալ փոքր մի առաջաբանով, որից տեղեկանում ենք, թէ երկի գաղափարը (ձեռագիր ընդօրինակութիւնը) ինքն ստացել է աստապատցի «Դուսաւորեալ Հոգի գերզգօն եւ աստուածաբան» Պետրոս Վարդապետից՝ քաղուած «ի հնագոյն գրքէ միոյնէ», ապա սրբագրել ու նրանում Աստուածաշնչից վկայութիւնների աղբիւրները մատնացոյց

1. ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ, Խօսք Յիմարիտ հաւատքի եւ առաքինաւոր վարքի մասին, դրաբարից աշխարհաբարի վերածեց Ս. Ստամբուլցեան, Երեւան, 1992:
2. SCHRÖDERI JOACHIMI JOH., *Thesaurus linguae Armenicae, antiquae et hodiernae*, Amstelodami, MDCCXI (1711).
3. Տե՛ս *Confessio fidel Armeniacae*, գլխի 259, 262, 265, 267, 271, 289-290, 294-295 եւ 297 էջերը:
4. Գիրք աղօթից, արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացույ հրեշտակակամ վարդապետ, Կ. Պոլիս, 1763, էջ 463-526:

անելով, յանձնել է տպագրութեան⁵: Նալեան, ցաւօք, չի յիշատակում՝ արդեօք հնազոյն ձեռագիր մատեանում գործը Նարեկացո՞ւ անունով է եղել, թէ պարզապէս Գրիգորի: Ասենք, որ, «Համառօտիւք բան խրատու» գրութեանը յետագայում եւս ունեցել է 5 տպագրութիւն՝ քանիցս վերագրուելով Նարեկացուն⁶, իսկ մէկ անգամ լոյս տեսել թէեւ Նարեկացու երկերի հետ համատեղ, սակայն խորագրում առանց Նարեկացի մականուան⁷:

Այդպէս, նախ՝ Շրոյդէրի, ապա եւ Նալեանի հեղինակաւոր միջամտութեամբ ու համոզմունքով՝ Նալեկացու անունով չըջանառութեան մէջ է մտնում դաւանաբանական արժէքաւոր մի աշխատութիւն, որի Նարեկացուն պատկանելը յետագայում Մխիթարեանների շնորհիւ է, որ կասկածի տակ է առնուում: Եթէ 1840 թուականներից առաջ, պոլսական հրատարակութիւններում, խորագրում, Գրիգոր անունն ուղեկցուում է «Նարեկացոյ» յաւելումով. «Գրիգորի Նարեկացոյ հրեշտակական սրբոյ վարդապետի եւ հայցողին ձրիատրի, ճշնագգեաց մաքրափայլ հեղինակի Համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ, իսկ եւ մաքուր վարուց առաքինութեան ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադարի»⁸, ապա վենետիկեան տպագրում, ձեռագիր օրինակների հետեւութեամբ, «Նարեկացոյ» յաւելումը հանուում է, վերացւում նաեւ «հրեշտակական սրբոյ վարդապետի եւ հայցողին ձրիատրի, ճշնագգեաց մաքրափայլ հեղինակի» ոչ ձեռագրական բնութագրումը եւ այն փոխարինւում «սրբոյ վարդապետի յօքներանեան մենաւորի» սկսուածքով, որ վկայւում է գրչագրերով: Այս վերջին ճշումն է հետեւում նաեւ Երուսաղէմի 1856ի հրատարակութիւնը, սակայն շարունակելով պահպանել «Նարեկացոյ» վերագրումը:

Այդպիսով, Վենետիկի տպագրով ճշգրտւում-վերականգնւում է երկի բուն ձեռագրական խորագրումը, բայց եւ չգղարացիօրէն գիտ-

5. Տե՛ս նոյն տեղում, էջ 463: Պետրոս Աստապատցուն չի կարել նոյնացնել նոյն դարի ջրթող եւ աստուածաբան-մեկնիչ՝ Պետրոս Բերդումենց Աղամալեան Նախի՛ւնացու հետ, քանի որ վերջինս մահացել է 1784ին, մինչդեռ 1763ին Նալեան Աստապատցուն յիշում է իբրեւ «լուսաւորեալ հօգի» (իմա՝ վախճանուած):

6. Այդ հրատարակութիւններն են՝ Հատոր երկրորդ մերթողմաց մատից..., Կ. Պոլիս, 1774, էջ 174-239. Գիրք աղօթից, արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1782, էջ 463-526. Հատոր երկրորդ մերթողմաց մատից..., Կ. Պոլիս 1807, էջ 174-239. այս հրատարակութիւնը տպակից է նոյն թուին լոյս տեսած Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացոյն... Հատորին, էջերի առանձին համարակալմամբ. ձառք եւ խոստովամութիւնիմ հաւատոյ, արարեալ սրբոց հարց մերաց Գրիգորի Նարեկացոյ եւ Վահրամայ վարդապետի, Երուսաղէմ, 1856, էջ 1-114:

7. Սրբոյ հօրն մերայ Գրիգորի Նարեկայ վամից վամակամի մատեանագրութիւնիմ, Վենետիկ, 1840, էջ 483-533:

8. Տե՛ս նշուած 1763, 1774, 1782, 1807ի տպագրւումները:

նական-բանաստեղծի կասկածամտութիւն է հանդէս բերուում իրատը Նա-
րեկացուն վերագրելու աւանդոյթի նկատմամբ: Հայր Սուքիաս Սոմայ,
տողատակային ընդարձակ ծանօթութեան մէջ նշելով, որ «բիւզան-
դացւոց տպագիրք (իմա՝ պոլսական հրատարակութիւնները) յանուն
Նարեկացւոյ մականգրեն զճառս զայս», տեղեկացնում է, որ իրենք եւս
այն հրատարակում են մի գրքում՝ անկասկածելիօրէն բանաստեղծին
պատկանող միւս երկերի հետ միասին⁹, սակայն, անխախտ պահելով
վերնագիրը ըստ 1601ի գրչագրուած իրենց ձեռագրի: Տարակոյսի
պատճառը եղել է, նախ, ա'յն, որ ոմանք «Համառօտիւք բան խրատու»ի
հեղինակ համարել են Գրիգոր Սկեւոացուն, որի Աղօթագրքին հա-
րազատ է այդ գործի ոճը, եւ ապա, որ ամենակարեւորն է, «իմաս-
տասիրական ոճ այսր ճառի չմիաբանիցի Նարեկացւոյ քերթողական
ոճոյն»¹⁰: Այնուամենայնիւ, անտեսելով իր այս վերջին ճիշտ դիտու-
մը, Հայր Սոմայն անհետեւողական եզրակացութեան է յանգում, թէ
ինք չի՝ համարձակում այդ գործն անհարազատ համարել Նարեկացուն՝
վերջնական վճիռը թողնելով ստուգազոյն գրաւոր ապացոյցների,
որոնք իր ձեռքին չունի:

Հայր Սոմայից փոքր ինչ առաջ՝ իրատին առանձնակի ուշադրու-
թիւն են դարձրել Հայկազեան Բառարանի հեղինակները: Մխիթարեան
մեծահմուտ հայրերը արդարացի են համարում նրանց, որոնք այդ
երկը նշանակութեամբ «դասեն ի կարգ Նարեկի», նաեւ նրանց, որոնք
հակուած են նրա հեղինակ դիտելու Գրիգոր Սկեւոացուն: Ենթադրում
են նաեւ, որ նրա հեղինակը թերեւս Նարեկացւոց աւելի ուշ ապրած
մէկը լինի, որ դեգերել է ա'յլ ազգերի (Արեւմուտքի) գրականութեան
մէջ, քանի որ անուանումներով յստակօրէն տարբերակում է առաքի-
նութիւնների ու մոլութիւնների տեսակները: Այդուհանդերձ, նրանք
իրատը Նարեկացուն են ընծայում («Առաւել Նարեկացւոյն է անկ
գործս»)՝ կարեւոր համարելով հետեւեալ խնդիրը. «Գործ էր գտանել,
թէ ո՞ր ից է եւ յորո՞ւմ ժամանակի Վարդան դիւանադպիրն, որ եղեւ
խնդրող գեղեցիկ վարդապետութեանս»¹¹:

Ի խնդիր Սոմայից կարեւոր համարուած ստուգազոյն ապացոյց-
ների յայտնաբերման՝ անդրադառնալով իրատի ձեռագրերին, որոնցից

9. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻՄ, Մատեմագրութիւնք, էջ 483, տողատակ:

10. Նոյն տեղում: Ի դէպ, «ոմանք» ասելով Սոմայը հաւանաբար նկատի է ունեցել նախ
եւ առաջ Մխիթարեան Յովհաննէս Զօհրապեանը, որ ըստ Բ. Սարգիսեանի, 1794ին
Պոլսոյ պատրիարքարանի թիւ 87 ձեռագրից ընդօրինակելով խրատը, փակագծում
նշել է թէ երկը «երեւի լինել Գրիգորի Սկեւոացւոյ» (տե՛ս ՄԱՐԳԻՍԵԱՆ Հ. Բ.,
Սրբոյ հօրմ Ծաղրի Պնտաղալոյ Վարք եւ մատեմագրութիւնք, Վենետիկ, 1907,
էջ 24., տողատակ 1 ծանօթութիւն), ապա նաեւ՝ Հայկազեան Բառարանի հեղի-
նակներին:

11. Նոր Բառգիրք Հայկազեան Լեզուի, հտ. Ա., Վենետիկ, 1836, էջ 10-11:

մեզ յայտնի են ընդամենը ութը: Տեսնենք, թե ի՞նչ խորագրով է այն հանդես գալիս եւ ո՛ւմ է վերագրում: Ըստ այդ երկու պահանջի՝ գրչագրերը բաժանում են խմբի, որոնցից երեքն ընդգրկում են մէկական ձեռագիր:

1. Ամենահին գրչագրում¹² երկն ունի խիստ համառօտ վերնագիր՝ առանց հեղինակային վերագրման, այսպէս՝ «Բան համառօտ վասն ուղիղ հաւատոյ»:

2. Մի ա՛յլ գրչագրում, որ հնութեամբ երրորդն է¹³, վերնագրում իբրեւ հեղինակ նշւում է Գրիգոր Սկեւոացին. «Դաւանութիւն Գրիգոր Վարդապետի Սկեւոացոյ ասացեալ»:

3. Երկու ձեռագրում գործը ղիտւում է պարզապէս իբրեւ Գրիգոր վարդապետի ստեղծագործութիւն. «Դաւանութիւն Գրիգոր Վարդապետի ասացեալ»¹⁴:

4. Զեռագրերից երեքում¹⁵ հեղինակ է ներկայացւում ոմն «յոք-ներանեան մենաւոր Գրիգոր», ընդ որում խորագրին ունի այսպիսի ընդարձակ տեսք. «Սրբոյ վարդապետի՝ յօքներանեան մենաւորի Գրիգորի Համառօտիւք բան խրատու վասն ուղիղ հաւատոյ եւ մաքուր վարուց առաքինութեան՝ ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ ղիւանադարի»¹⁶:

5. Վերջապէս, բոլորից առանձնանում է Տրդ գրչագիրը, որ նոր ժամանակների ընդօրինակութիւն է¹⁷: Այստեղ խրատը հանդէս է գալիս Գրիգոր Նարեկացու անունով՝ «սրբոյ վարդապետի՝ յօքներանեան մենաւորի Գրիգոր Նարեկացւոյ...», այնուհետեւ՝ ինչպէս հոր խմբի ձեռագրերում է:

12. Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. թիւ 1324, ժամանակ 1281, գրչութեան վայր՝ Հաղպատ, էջ 361ա-377բ:

13. Ձեռ. թիւ 2178, ժամանակ մօտաւորապէս 1301, գրչ. վայր՝ անյայտ, էջ 112բ-137բ:

14. Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի թիւ 1105 ձեռ., 1409, Երզնկայի Աւագ վանք, էջ 291ա-331ա (տե՛ս ՊՈՂԱՐԵԱՆ Ն., Մայր ցուցակ ձեռագրաց սրբոց Յակոբեանց, Հո. Դ., Երուսաղէմ, էջ 33ա-55ա: Վերջինը հաւանաբար արտագրութիւն է առաջինից: Վերնագիրը յետոյ նրա գրիչն ակնացրել է «Աստուծով» բառը:

15. Մաշտոցեան Մատենադարան, ձեռ. թիւ 581, ժամանակ մօտաւորապէս 1371, գրչ. վայր անյայտ, էջ 265ա-314բ. - թիւ 2678, 1426-1476 թթ., գրչ. վայր անյայտ, էջ 25ա-34բ. - Պոլսի Ղալաթիայի Ազգային մատենադարանի ձեռ. թիւ 105, 1713, գրչ. վայր անյայտ, էջ 109-169 (տե՛ս ԿԻՒԼԵՍԵՐԵԱՆ Բ., Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ Ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961, էջ 669):

16. Խորագիրը վկայակոչւում է ըստ թիւ 581 ձեռագրի: Միւս երկուսում եւս այն նոյնն է. կայ որոշ բառերի եռեւանդութիւն թիւ 2678 եւ քերականական-ուղղագրական մի երկու մեղանշում (Ազգ. Մատենադարանի թիւ 105 ձեռագիր):

17. Վիեննայի Միխիթարեան մատենադարանի թիւ 21 ձեռ. (ամբողջը միայն խրատն է): Ըստ Տաշեանի, գրութե է 1839 թուականից առաջ, ԺԸ. դարու վերջին կամ ԺԹ. դարու սկզբին (ՏԱՇԵԱՆ Թ., Ցուցակ ձեռագրաց մատենադարանին Միխիթարեանց ի վիեննա, Վիեննա, 1895, էջ 134): Որ «Նարեկացւոյ» վերագրումը այդ ձեռագրում,

Ըստ խմբերի միմեանցից տարբերող այս յիշատակումները ի մի բերելով՝ կարող ենք եզրակացնել, որ նախ՝ «Համառոտիւք բան խրատուն» ինչ որ Գրիգորի գործ է, որին որոշարկելու նպատակով արդէն իսկ միջնադարից սկսած փորձել են նրա մէջ տեսնել մի դէպքում՝ Գրիգոր Սկեւոացուն (անշուշտ Ներսէս Լամբրոնացու վարձագիրն է), միւս դէպքում՝ Գրիգոր Նարեկացուն։ Այս վերջին պարագայում (վիեննական գրչագրում) վերագրումն անկասկած կատարուել է Նարեկացու անունով այն տպագրուած լինելու պատճառով։ Բուն միջնադարից աւանդուած ձեռագրերի մէջ չկայ մէկը, որ խնդրոյ առարկայ երկն ընծայէր Նարեկացուն։ Վիճայարոյց հարցը մնում է հետեւեալը․ ո՞վ է «յոքնեբանեան մենաւոր»ը, Գրիգոր Սկեւոացի՞ն թէ մէկ ա՛յլ Գրիգոր։ Խորատի ծաւալուն խորագիրը պահպանել է մի թանկագին վկայութիւն, որն օժանդակում է պարզութիւն մտցնել հեղինակ Գրիգոր ո՞վ լինելու հարցում։ Դա «ի խնդրոյ նորին հարազատի Վարդանայ դիւանադպիր» յիշատակումն է։

Ո՞վ է դիւանադպիր Վարդանը։

Նրա իսկութեան առաջին անդրադարձել է Նալեան, եւ երեւի հաշուի առնելով «դիւանադպիր» բառի յուշող իմաստը, Վարդանին համարել Արծրունեաց Սենեքերիմ արքայի քարտուղարը, այսինքն՝ հրովարտակաց դպիրը, միաժամանակ եւ Նարեկացու հարազատը։ Ուրեմն, Նարեկացին «Համառոտիւք բան խրատուն» հարմարել է «ի խնդրոյ Վարդանայ դիւանադպիրն Սէնէքարիմայ Արծրունեաց արքայի՝ արքունական հրովարտակաց գծագրողին», «ի խնդրոյ արքունական առն (իւրոյ հարազատի եւ արենակցի)»¹⁸։ Ի դէպ, այժմ առկա պատմական ո՛չ մի աղբիւրում կամ յիշատակարանում վկայուած չէ, որ Սենեքերիմ արքան այդ անունով դիւանադպիր է ունեցել։ Անտարակոյս, Նալեանին հետեւելով է, որ Զամբեան եւս կրկնում է սկզբնաղբիւրներով չհաւաստուող նրա միտքը, թէ Նարեկացին «Արար դարձեալ եւ զհրահանգութիւն հաւատոյ եւ վարուց ի խնդրոյ ազգականին իւրոյ Վարդանայ, որ էր դիւանադպիր Սենեքերիմայ արքային Արծրունեաց»¹⁹։

Երկի խորագրում, յետագայ յաւելում է, դրա օգտին է խօսում բազմազգիտակ Տալեանի նկատողութիւնն իրենց գրչագրի պակաս արժանահաւատութեան վերաբերմամբ․ «Ճիշտ մերիսին նման նոտրգիր օրինակ մըն ալ կայ ճառիս Վենետիկ, - նշել է նա, - բայց առանց անուան Նարեկացոյ, որով եւ ճառս անհարազատ կը համարի «Հայկական հին դպրութեան պատմութեան» հեղինակը» (իմա՝ Զարպանալեանը․ տե՛ս նոյն տեղում)։

18. Տե՛ս Գիրք աղօթից, արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացոյ, Կ. Պոլիս, 1782, էջ 460-461։

19. ԶԱՄԶԵԱՆ Հ. Մ., Պատմութիւն Հայոց, հտ. Բ, Վենետիկ, 1785, էջ 853։

Քանի որ զբաբարում «Հարազատ» բառը գործածվում է նախ եւ առաջ նոյն հօրից ծնուած եղբայրների համար, այնուհետեւ ուրիշները Վարդանին եւ Նարեկացուն համարել են եղբայրներ. «Վարդան դիւանադպիր, եղբայր Գրիգոր Նարեկացու» արձանագրել է Հր. Աճառեան²⁰: Ինչ խօսք, Նալեանից մինչեւ Աճառեան ճգնադր այդ հաստոյումը ճշմարտութեան ոյժ կ'ունենար եւ հիմք կը ծառայէր Նարեկացուն համարելու, եթէ պատմական զուգահեռ ո'րեւէ վկայութիւն լինէր այն մասին, որ Նարեկացին իսկապէս Վարդան անունով եղբայր է ունեցել: Նրա վարքի ո'չ մի խմբագրութեան մէջ եւ ո'չ էլ նրան յիշատակող մատենագիրներից գոնէ մէկի մօտ այդպիսի տեղեկութիւն կայ: Իր իսկ յիշատակարաններից գիտենք, որ նա ունեցել է միայն Սահակ եւ Յովհաննէս անունով եղբայրներ: Ահա թէ ինչո՞ւ Գ. Զարպհանյալեան աներկբայ եզրակացրել է, որ Նարեկացուն չըլլալուն գլխաւոր ապացոյցն ալ այն կ'երեւնայ, որ Վարդան անուամբ եղբայր չունէր Նարեկացին...»²¹: Նրան յարում եւ Ե. Դուրեան, որ գրել է. «... որովհետեւ Վարդան անունով եղբայր մըն ալ չէ ունեցած Նարեկացին, անհարազատ պէտք է համարել իրեն ընծայուած «Նարեկացու» ընդարձակ գրութիւնը, որուն ոճն ալ արդէն չի կրնար Նարեկացիի ոճին հետ համեմատուիլ»²²:

Այդպիսով, Վարդանի ո'վ լինելը մնում է չպարզուած եւ կարիք է զգում հետախուզումների ու լուծման: Վարդանի հետ Նարեկացու առնչութեան կապի ժխտումն ինքնին նշանակում է նաեւ Նարեկացու՝ Նարեկի հեղինակ լինելու հնարաւորութեան բացառում: Մխիթարեան Վրդ.՝ Բ. Սարգիսեանի հակառակ պնդումը՝ ցոյց տալու մի կողմից՝ «Ողբերգութեան մատենանում», միւս կողմից՝ «Համառօտիւք բան խրատու» գրուածքում նկատուող ազդեցութիւնը Դ. դարի բիւզանդական մատենագիր Եւագր Պոնտացուց եւ չեղակի անհիմն եզրակացութիւնը, թէ, ուրեմն, Նարեկացին է այդ Նարեկի հեղինակը²³, ամենեւին պատճառաբանուած չէ: Եթէ նոյնիսկ կայ այդ ազդեցութիւնը, ապա դա միայն մէկ հեղինակի վերագրելի հանգամանք չէ, քանի որ թէ՛ Նարեկացին եւ թէ՛ Նարեկի հեղինակը, կարող էին հետեւել յոյն աստուածաբանին: Բանն ուրիշ կը լինէր եւ Սարգիսեանի հետեւութիւնը կշիռ կ'ունենար, եթէ նա փորձէր բովանդակային հարազատութիւն տեսնել ստուգապէս Նարեկացուն պատկանող երկերի եւ Նարեկի միջեւ:

20. ԱՃԱՌԵԱՆ Զ., Հայոց անճամուռների բառարան, հտ. Ե, Երեւան, 1962, էջ 79:

21. ԶԱՐՊՀԱՆԵԱՆ Զ., Պատմութիւն հայ եկեղեցւորութեան Դ-Թ դար, Վենետիկ, 1897, էջ 548:

22. Ամբողջ երկեր Նիդիշ պատրիարք Դուրեանի: Ա. Պատմութիւն հայ մատենագրութեան, Երուսաղէմ, 1933, էջ 172:

23. ՍԱՐԳԻՍԵԱՆ Զ. Բ., Սրբոյ հօրն Եւագրի Պոնտացույ Վարդ եւ մատենագրութիւնը, էջ 24-24Ա:

Դիւանադպիր Վարդանի իսկութիւնը պարզելու ուղղութեամբ որոնումներն առիթ են տուել նաեւ երկու ա՛յլ ենթադրութեան: Մէկը ձեռագիր մը նկատում է թղթի մի պատառիկի վրայ՝ պատահաբար յայտնուած Մաշտոցեան մատենադարանի ինչ որ գրքի էջերի արանքում: Նշում կատարողը երեւի էջմիածնի ձեռագրագէտ վարդապետներից է եղել: Մի գրչագրի²⁴ յիշատակարանում, գրուած 1287ի Վարդան Արեւելցի պատմիչի աշակերտ Գէորգ Լամբրոնացու ձեռքով, նա, հանդիպելով բանի սպասաւոր ոմն Գրիգորի եւ նրա հարազատ եղբայր Վարդանի անուններին, նրանց նոյնացրել է Որատի հեղինակի եւ նրա պատուիրատուի հետ: Բայց այդ Վարդանը ներկայանում է որպէս Բջնոյ եպիսկոպոսի «ձեռնասուն» «հոգեւոր որդեակ», դիւանադպիր չէ, որով եւ փակուած է նոյնացման հնարաւորութիւնը²⁵:

Փոքր ինչ հաւանականութեան պատրանք է թողնում միւսը՝ Ն. Պողարեանի կարծիքը: Նա համոզուած է, որ Որատը Գրիգոր Սկեւոացու գործն է, մի բան, որ, ինչպէս տեսանք, վկայւում է նրան անծանօթ մէկ ձեռագրով (Մաշտոցեան մատ., թիւ 2178): Նրա ենթադրութեան հիմքը, իր ասելով, այն է, որ Սկեւոացին Վարդան դիւանադպրի եւ Յակոբ քահանայի խնդրանքով յօրինել է նաեւ «Բան գովեստի Ս. Կուսին Մարիամու» պատմութիւն-ներբողը²⁶, անտիպ մի գործ, որ պահպանուել է Երուսաղէմի հայոց պատրիարքարանի երկու գրչագրում²⁷: Այդ ներբողը հանդիպում է եւ Մաշտոցեան Մատենադարանի երեք ձեռագրում²⁸, բայց խորագրում Գրիգոր Նարեկացու, իբրեւ նրա հեղինակի, անունը նշուած չէ. բուն շարադրանքում եւս չկայ տեղեկութիւն այն մասին, որ այն գրուած է Վարդան դիւանադպրի եւ Յակոբ քահանայի պատուէրով: Այդպիսի յիշատակարանային հատուած իր ձեռագրաց ցուցակում չի բերում եւ ինք՝ Պողարեանը: Մնում է հանելուկ՝ ո՞րն է նրա տեղեկութեան աղբիւրը, որ հիմք դարձնէինք ներկայ դէպքերում մեզ հետաքրքրող Որատը եւս Գրիգոր Սկեւոացուն համարելու:

24. Մաշտոցեան Մատենադարանի թիւ 3082 ձեռ., տօնապատճառ-ժողովածու, գրչի յիշատակարանը՝ 475բ-477բ էջերում:

25. Հիմա. Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ ԺԳ. դար, կազմեց Ա. Մաթեոսեան, Երևան, 1984, էջ 305:

26. ՊՈՂԱՐԵԱՆ Ն., Հայ գրողներ, Երուսաղէմ, 1971, էջ 203:

27. Տէ՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Ա, կազմեց Ն. Պողարեան, Երուսաղէմ, 1986, էջ 241 (թիւ 71 ձեռագրի նկարագր.) եւ 454 (թիւ 154 Գ. ձեռագրի նկարագր.):

28. Մաշտոցի Մատեն. ձեռ. թիւ 1324 (ժամանակ 1381, էջ 397ա-400բ եւ 395ա), ձեռ. թիւ 2178 (մօտաւորապէս 1391ին, էջ 144բ-154բ), ձեռ. թիւ 2322 (ժ. դ., էջ 244բ-250բ): Այստեղ ներբողի կապակցութեամբ հարկ ենք համարում ծանուցել, որ, ինչպէս վերեւում նշեցինք, թէ՛ Երուսաղէմի եւ թէ՛ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերում այն կա՛մ անանուն է, կա՛մ խորագրում վերագրուած ոմն «յոգնամեղ

Առհասարակ հայոց ձեռագրերի աշխարհում Գրիգոր անունով բազում մատենագիրների գրական մասն ու բաժինը շատ խառն է, չփոթուած, մէկինը միւսին վերագրուած: «Շահե» է այն Գրիգորը, որն աւելի նշանաւոր է եղել, ինչ խօսք, մանաւանդ՝ Գրիգոր Նարեկացին, որին գրիչները, ինչպէս տեսանք, հակուած են եղել ա՛յլ Գրիգորների գործերը վերագրելու՝ ձգտելով բարձրացնել իրենց արտագրած երկերի յարգն ու պատիւը: Յիշենք, որ մեծ բանաստեղծի ստուգելու կանգնած են ուրիշ Գրիգորներ՝ Վահրամ Պահլաւունի Գրիգոր Վկայասէրը, Շնորհալու եղբայր՝ Գրիգոր Փռքը Վկայասէրը, Գրիգոր Հեսուացին կամ Մարաչեցին, Գրիգոր Սկեւացին՝ Կոստանդին Բարձրբերդցու մրցակիցը հայոց կաթողիկոսական զահի համար պայքարում, եւ ուրիշ-ուրիշ Գրիգորներ: Բայց խրատը բուն միջնադարից աւանդուած ձեռագրերում Նարեկացուն չի՛ ընծայուել: Տպագիրների հետ է կապուած չփոթումը: Ուրեմն, վերստին դառնանք Վարդան դիւանադպրի եւ «յոքներանեան մենաւոր» Գրիգորի առեղծուածին. ովքե՞ր են նրանք:

Գրիգոր մենաւորը, մեր կարծիքով, Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ պահլաւունին է, Գրիգոր Բ. Կաթողիկոսը (1065-1105), որի հոգեւոր-եկեղեցական գործունէութիւնը ո՛չ այնքան հանգիստ աթոռակալութեան, որքան թափառումների ու առանձնացումների մէջ ծաւալուեց: Ժամանակի հայոց անկայուն կեանքն էր պատճառը, մայր հայրենիքից դէպի Տաւրոսեան լեռները կարաւան բռնած հայութեան ընթացքի վերիվայրումները: Ի խնդիր ազգապահպան եւ մշակութային ծրագրերի իրականացման՝ Կոստանդնուպոլսով Երուսաղէմ ու այդ տեղից Եգիպտոս անցնելով ու շարունակ տարազնաց հայութեան բեկորների հետ հանդիպելով, նա ԺԱ. դարի վերջերին վերադարձաւ Եփրատացիք (Մեջերկրայք) կոչուած երկիրը եւ մինչեւ Գող Վասիլի իշխանանիստ Քեսունի մօտ, Շուղը անապատում, կը հաստատուէր, Սեւ լեռներում իրեն տուեց ճգնակեցութեան, ինչպէս այդ մասին նրա քրոջ թոռը՝ Ներսէս Շնորհալին է գրում.

Ի վայելուչ յայն վայր եկեալ

Հովուապետին զգօնացեալ,

մենաւոր՝ Գրիգորի, ինչպէս որ «Համառօտիւք բուն խրատուն» որոշ օրինակներում: Մեզ թուում է, դրանք միեւնոյն հեղինակի՝ Գրիգորի գործերն են, տարբեր Սկեւացուց: Ի միջի այլոց, նրանց հեղինակի նոյնութեան օգտին է խօսում Եղիշէից՝ վերցուած հետեւեալ ոճական դարձուածքը, որ հանդիպում է երկուսում էլ. այսպէս՝ «Եւ արդ սկսցում, ուստի սկսամիմ է արժամ, ի դաւանութիւն հաւատոյն ճշմարտութեան...» («Համառօտիւք բան խրատուն», տե՛ս ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ, Մատեմագրութիւն, նոյն, էջ 485 եւ «Եւ արդ սկսցում, ուստի սկսամիմ է արժամ»՝ զՀոգին իմաստութեան առնելով առաջնորդ...» («Բան գովեստի...» տե՛ս ձեռ. Թիւ 2322, էջ 248):

Ի Սեաւ՝ Մթին լեառն անուանեալ,
Ուր են հոգիք լուսաւորեալ,
Ձյոգնաւորդով կեանս թողեալ...
Յաստուածային վարս ճգնեալ
Եւ զանմարմնոց կիրս ընկալեալ²⁹:

Նրա կրօնաւորելու մասին յիշում է նաեւ Շնորհալու վարձազիրը․
«... գլուսաւորչին յիշէր զհանդէս, որ ի կատարումն աստուածային
գործոցն ի միայնարանս ճգնէր: Սոյն օրինակ եւ սա ի Սեաւ լերինս
միայնարանս բնակէր՝ միշտ պարապեալ ընթերցման սուրբ գրոց եւ
աստուածախօս աղօթից: Եւ ղաղարեալ ի նոյն ճգնութիւն ամս բա-
զումս»³⁰:

Բայց մեր ենթադրութեան հաւաստիութեան արժէք տալու համար
դիմենք մի ա՛յլ երկրի՝ միջնադարագէտին քիչ թէ շատ ծանօթ՝ «Վար-
դանայ Հայկազնի Տաղ գերեզմանական վասն փոխման երանեալ եւ
սուրբ կաթողիկոսին Հայոց Գրիգորի Վկայասիրի» խորագրով³¹:

Վարդան Հայկազնը Գերեզմանական տաղը գրել է Վկայասէրի
մահուանից³² քիչ անց, սիրելի մարդու կորստեան անփարատելի ցա-
ւով: Ինչ որ առիթով ինք բացակայել է, եւ այդ բացակայութեան
ժամանակ կաթողիկոսը վախճանուել է ու հողին յանձնուել:

Ձեմ համբուրել զաջդ արքայի
Բո ի վերջին մեծն ողջունի...
Տեսոյդ չեղայ քո արժանի,
Մահարձանիդ պատահեցի...
Բերթողական լաց չարեցի,
Բեզ կափարիչ հաստատեցի:

Վարդան Հայկազնը, ի թիւս հայ եկեղեցուն ու մշակոյթին մա-
տուցած Վկայասէրի զբաղումներին, այն է՝ «Տօնական» ժողովածուի

29. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ, Վիպամուտքիւմ, աշխատասիրութեամբ Մ. Մկրտչեանի,
Երեւան, 1981, էջ 120-121:

30. Տե՛ս Սոփիոբ Հայկակամբ, հտ. ԺԴ., Վենետիկ, 1854, էջ 29:

31. Տե՛ս Մաշտոցի Մատենադարան, մագաղաթեայ ձեռ. թիւ 2496 (ժամանակ 1294, դրչ․
վայր՝ անյայտ, բայց կրիկիա, էջ 324բ-342ա): Հրատարակուած՝ «Բազմավէպ»,
1873, էջ 264-271: Մէջբերումները կատարում ենք այս տպագրից՝ փակագծերում
նշելով էջերը:

32. Թէ՛ Մատենադարանի գրչագրում եւ թէ՛ վենետիկեան տպագրում, որի հիմք ձե-
ռագիրը 1306 թուականից է, տաղի վերջում կայ այսպիսի նշում. «Ի թուականին ՇՄԷ
եղև փոխումն սրբոյ Հայրապետին»: Այդ թուական (փրկչական 23 Փետր. 1108 - 22
Փետր. 1107 թ.), չի՛ համապատասխանում Վկայասէրի վախճանուելու վերաբերեալ
Մատթէոս Ուռհայեցոց ականդուած եւ այժմ ընդունուած տարեթուին՝ 1105 թ.:
Ճշգրտումն ուսումնասիրութեան կարօտ հարց է:

ստեղծման եւ ներբողական ճառեր ու երգեր գրելու եւ թարգմանութիւնների, յատուկ նշում է նրա առանձնանալու եւ կրօնաւորելու մասին: Յանձին Վկայասէրի մեզ ներկայանում է միջնադարի քրիստոնէական ըմբռնումով՝ երանաւէտ ու բազմերջանիկ մի մարդ, որ իրերի բերումով կեանքի որոշ շրջանը տուել է ճգնութեան՝ իր նմանների հանգոյն կոչուելով մենաւոր:

Միւս կողմից, մեր ենթադրութեան ի նպաստ է խօսում եւ Վարդան Հայկազնի անունը, որ Գրիգոր Վկայասէրին համարում է ո՛չ միայն իրեն յոյս ու հոգեւոր տէր, այլեւ հարազատ: Վկայասէրը փոխարինել էր իր մարմնական ծնողին, որին նոյնպէս Վարդանը, իբրեւ մեռածի, յիշում է:

Ու ես առաւել կսկծաւոր
Եմ իմ հարանցն որբ միւսուր,
Այն որ ծնողն էր մարմնաւոր,
Ու որ յոյս ու տէր էր հոգեւոր,
Այն հարազատն փառաւոր
Աստէն ի սէրն գթաւոր...

Մենք միտումնաւոր ընդգծեցինք «հարազատն» բառը, որովհետեւ դա՛ եւս մեզ տանում է դէպի «Համառօտիւք բան խրատու» երկը: Յիշենք վերջինիս խորագրում նշուող պատուիրատուին՝ «Ի խնդրոյ»։ Գրիգորը, ընդառաջ գնալով դիւանդպրի ցանկութեան, դարձեալ մատնանշում է նրա՝ իրեն հարազատ ու արիւնականից լինելու հանգամանքը՝ յիշելով միաժամանակ Գրիստոսի պատուիրանը, թէ պէտք է տալ իւրաքանչիւրին, ո՛վ էլ որ խնդրի. «Իսկ ինձ առ քեզ, - ասում է Գրիգորը, - ո՛վ սիրեցեալ անձին իմոյ, կրկին եւ ոչ մէկին է հարկաւորութիւն տալոյ. մի՛ ըստ վերագոյն ցուցեալ Տեառն հրամանին, որ ամենայն խնդրողի օրինադրէ զտալն, եւ երկրորդ՝ ըստ քնաւոր արեանմառու մեքճաւորութեան եւ սննդակցութեան»³³:

Խորագրից եւ բնագրից քաղուած այս երկու վկայութիւնը դաշնութեան մէջ են իր ու Վկայասէրի ազգակցական կապի մասին ճաղում Վարդան Հայկազնի հաղորդածի հետ: Մի պահ առաջ անցնելով ասենք, որ երկու Վարդաններին՝ Հայկազնին եւ դիւանդպրին մենք նոյն անձն ենք համարում: Վերջինը, հակառակ Նալեանի, ո՛չ թէ եղել է արքայական քարտուղար, այլ, մեր կարծիքով, Կաթողիկոսարանի ատենադպիրը: Դա լուրջ տարակոյսի առիթ չի կարող տալ: Յայտնի է,

33. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻՆ, Մատեմագրութիւնք, էջ 484: Ի դէպ, Հայկազեան Բառարանը «սննդակցութիւն» բառը բացատրում է՝ «Մսնդակից դու. ի բնէ ընտանութիւն» (հտ. Բ., էջ 725), որ ամենեւին չի հակասում մեր մտեցման:

որ Գրիգոր Վկայասէրը, ինքն անմիջական ժառանգ չունենալով, անսահման հոգատարութեան ու խնամքի տակ էր առել իր զարմիկներին, մասնաւորապէս քոյրերից մէկի թոռներ, Ապիրատ իշխանի մանկահասակ որդիներ Գրիգորին եւ Ներսէսին: Անշուշտ, նոյն հոգածու ձեռքը պիտի տարածէր նաեւ միւս հարազատի՝ Վարդանի վրայ, որ կոչւում է Հայկազ՝ ըստ իր ծագման: Գիտենք, որ Գրիգոր Մազիստորոսի չորս զուատրերից մեծը, այսինքն՝ Վահրամ-Գրիգոր Վկայասէրի աւագ քոյրը, ամուսնացած էր Վեստ Սարգսի հետ, իսկ վերջինս Մատթէոս Ուռհայեցու ժամանակագրութեան մէջ անուանւում է Հայկազն իշխան: Անիի Թագաւորութեան վերջալուսի առնչութեամբ ժամանակագիրը տեղեկացնում է. «... այր ոմն յիշխանաց տանն Հայոց, որ էր այր նենգաւոր, անուն Ազատ»³⁴ Սարգիս Հայկազն, ազդ առնէր Հոռոմոց եւ ի տուր տայր զաշխարհն Հայոց... եւ կամեցաւ Թագաւորել ի վերայ Հայոց... վասնզի Հայկազն էր»³⁵:

Թէեւ որոշակի տեղեկութիւններ չունենք, բայց համոզուած ենք, որ Վարդան Հայկազնը կա'մ Վեստ Սարգսի տղան է կա'մ, որ աւելի հաւանական է, նրա թոռը, իսկ «Հայկազն» մականունը Սիւնեաց իշխանական տան ու Հայկազն Վեստ Սարգսի ժառանգը լինելու վերաբերեալ մի աներկբայ վկայութիւն է³⁶: Չենք կասկածում նաեւ, որ սնունդը ու կրթութիւնը ստանալով հայրախնամ իր մօրեղբօր եւ կամ տատեղբօր հովանու տակ՝ Վարդանը դարձել է նրա կաթողիկոսարանի դիւանադպիրը: Յամենայն դէպս, հայոց պատմութեան հենքի վրայ,

34. «Վեստ» բառի հայերէն զուգահեռն է:

35. ՄԱՏԹԵՂՈՍ ՈՒՌԻՆԱՅԵՑԻ, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 84: Տե՛ս նաեւ էջ 87ում:

Սիւնեաց իշխանական տոհմը հայ պատմական մատենագրութեան մէջ աւանդաբար ծագումով կապւում էր Հայկ Նահապետի սերնդից՝ Սիսակ Նախնու հետ: Յովհաննէս Դրասխանակերտցին Սիսական իշխանների համար յատուկ ընդգծում է այդ հանգամանքը՝ անուանելով Հայկազուն, Հայկազունք. «Յայսմ ժամանակի Վասակ Հայկազուն, որ Գաբուն յորջորջէր» (ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԴՐԱՍ-ԽԱՆԱՅԵՑԻ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 135), «գլխաւոր Գրիգոր, զՀայկազունս զարմիւ» (էջ 224), «Հայկազուն եղբարքն ... Սահակ եւ Վասակ» (էջ 228), «մեծ Հայկազունն Վասակ» (էջ 294) եւայլն: Հայ զբնորոշողի մեծագոյն գանձերից մէկի՝ էջմիածնի փոսկրեայ կազմով Աւետարանի պատուիրատուն է Սիւնիքի Բղենոյ Նորա վանքի վանահայր՝ Հայկազն Ստեփանոսը, որն իր անունից յիշատակաբանում նշել է տուել. «Հայկազնեա գոլ ասէին զիս» (ձեռ. Թիւ 2374, էջ 230բ. հմտ. ՄԱԹԵՆՈՍԵԱՆ Ա., էջ 53): «... Ի Սիսականայ Հայկազն» կարդում ենք Գրիգոր Մազիստորոսի Դ. Թղթում (տե՛ս ԳՐԻԳՈՐ ՄԱԳԻՍՏՐՈՍ, Թղթեր, էջ 171): Չենք վկայակոչում այդ կարգի եւ ա'յլ յիշատակումներ, որպիսիք բաւական թիւ են կազմում:

36. Պատահական չէ, որ Վարդան Հայկազնի Տաղը հրատարակող վենետիկահայ վարդապետը (թուում է՝ Հայր Ղեւոնդ Ալիշանը), իր փոքրիկ ներածականում նշելով,

նկատառուած ժամանակային հատուածում եւ Գրիգոր Բ. Պահլավունի-Վարդան Հայկազն ազգակցական-մշակութային յարաբերութեան մէջ է, որ պատճառաբանում ու բացատրելի է դառնում «Համառօտիւք բան խրատու» դաւանաբանական արժէքաւոր գործի հեղինակ, «յոք-ներանեան մենաւոր» Գրիգորի եւ նրա հարազատ ու գրական պատուիրատու Վարդան դիւանադպրի ինքնութեան խնդիրը: Եթէ այդպէս է, ապա այդ երկով հայ մատենագրութեան պատմութեան մէջ իր օրինական տեղն է գտնում Գրիգոր Վկայասէրը, որի մշակութային գործունէութեան մասին շատ է խօսուել, սակայն յանուանէ մատնացոյց չի արուել նրա ո՛րեւէ ստեղծագործութիւն: Խրատը դառնում է այն հիմքը, որ հնարաւորութիւն կ'ընձեռի որոնումներ կատարել եւ ի յայտ բերել նրան պատկանող նաեւ ուրիշ երկեր:

Եւ ամենակարեւորը՝ մեզ զբաղեցնող խնդրի տեսանկիւնից նայելով Խրատին, անտարակոյս, կարող ենք եզրակացնել, որ այն պատահականօրէն, առանց լուրջ հիմնաւորման է կապուել Նարեկացու անուան հետ: Իրականում ա՛յլ մատենագրի գործ է:

ՊՕՂՈՍ ԽԱԶԱՏՐԵԱՆ

()

որ նրա հեղինակը «տալաւին անծանօթ մնայ վարուքն եւ կարգաւ կամ աստիճանաւ», այնուհետեւ նրան համարում է «զարմանալի իսկ Հայկազն կոչմամբն յերկոտասաներորդ դարու, յորում գրեացն» (տե՛ս «Բազմավէպ», 1873, էջ 284): Այդ կոչումով, այսպէս, միայն եւ միայն Վարդանի՝ Սիւնեաց իշխանական տնից սերելու հանգամանքով է բացատրուում: